



ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 06 » փետրվարի 2018թ.

N 05

ք. Ստեփանակերտ

Արցախի Հանրապետության Գլխավոր դատախազին առընթեր էթիկայի  
հանձնաժողովի կազմը հաստատելու մասին

Ղեկավարվելով «Դատախազության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով, 21-րդ հոդվածի 2-րդ մասով, «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով և ԱՀ Գլխավոր դատախազի թիվ 09 առ 28.01.2009թ. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողով ստեղծելու մասին» հրամանի համաձայն

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հաստատել Արցախի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողովը հետևյալ կազմով`

1) Հանձնաժողովի նախագահ`

ԱՀ գլխավոր դատախազի տեղակալ, արդարադատության երրորդ դասի պետական խորհրդական Սևակ Վյաչեսլավի Հակոբյան` երեք տարի ժամկետով:

2) Հանձնաժողովի անդամներ`

1) ԱՀ Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության բաժնի պետ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական Ս.Վ. Գաբրիելյան/նշանակվել է ԱՀ գլխավոր դատախազի թիվ 9 առ 02.03.2016թ. հրամանով/

2) ԱՀ Գլխավոր դատախազության կազմակերպա-վերահսկողական, վիճակագրության, վերլուծության, իրավական ապահովման, միջազգային կապերի կապերի և անձնակազմի հարցերով բաժնի պետ, արդարադատության առաջին դասի խորհրդական Կ.Մ. Սաֆարյան/նշանակվել է ԱՀ գլխավոր դատախազի թիվ 24 առ 09.03.2015թ. հրամանով/

Սույն հանձնաժողովում ընդգրկել ԱՀ Նախագահի 2018 թվականի հունվարի 31-ի թիվ ՆՀ-4-Ա հրամանագրով երեք տարի ժամկետով նշանակված 2 իրավաբան անդամ հետևյալ կազմով.

1) ԱՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Սրբուհի Գրիգորիի Արզումանյան/համաձայնությամբ/:

2) ԱՀ արդարադատության նախարարի տեղակալ Սիրան Հայկի Ավետիսյան

Հանձնաժողովում ընդգրկել նաև ԱՀ Նախագահի 2015 թվականի ապրիլի 10-ի թիվ ՆՀ-35-Ա հրամանագրով նշանակված իրավաբան անդամ ԱՀ Գյուղատնտեսության նախարար /նախկինում ԱՀ կառավարության աշխատակազմի տարածքային կառավարման և վերաբնակեցման վարչության պետ / ժիրայր Մելսիկի Միրզոյանին և ԱՀ Նախագահի 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ՆՀ-129-Ա հրամանագրով նշանակված իրավաբան անդամ Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի պետաիրավական վարչության իրավաբանական բաժնի վարիչ Վրեժ Արկաղիի ժամհարյանին:

2. Ուժը կորցրած ճանաչել Արցախի Հանրապետության գլխավոր դատախազի 2015 թվականի փետրվարի 06-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողովի կազմը հաստատելու մասին» թիվ 03 հրամանը:

3. Հրամանն ուղարկել ԱՀ գլխավոր դատախազի տեղակալներին, ԱՀ գլխավոր դատախազության ավագ դատախազ(ներ)ին ու դատախազին, բաժնիների պետներին և ԱՀ քաղաքադատախազներին:

**Արդարադատության երրորդ դասի  
պետական խորհրդական**

**Ա.Ա.Մոսիյան**